

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Միքելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «ԲՏԱ

Բանկ» ՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ: «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ պատասխանը ստանալուց

հետո, կամ եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝	Փիրուզ Սարգսյան
Հասցե՝	ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1 «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ
Հեռ.՝	(37410) 58-23-22, 58-23-21
Ֆաքս՝	(37410) 58-24-21
կայք՝	http://www.fsm.am



Տեղեկացնում ենք Ձեզ նաև այն մասին, որ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն հրաժարվել է միայն այն պահանջներով Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի չափը չի գերազանցում 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նշված չափը գերազանցող պահանջներով Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն չի հրաժարվել:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ միջև վեճերը, սակայն կարող է «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական Բանկ

Հասցե՝ ՀՀ ԿԲ Վազգեն Սարգսյան.6, Երևան – 0010
Հայաստանի Հանրապետություն
 Հեռ.՝ (37410) 592 698
 Էլ. հասցե՝ mcbank@cba.am
 Ֆաքս՝ (37410) 523 852
 կայք՝ http://www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և “ԲՏԱ Բանկ” ՓԲԸ-ի միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ “ԲՏԱ Բանկ” ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք “ԲՏԱ Բանկ” ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: